

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հունաստանի Հանրապետության դեսպանությունը Երևանում հայտարարում է թարգմանչի/բանավոր թարգմանչի մեկ (1) հաստիքի թափուր աշխատատեղի մասին:

Հունաստանի Հանրապետության դեսպանությունը Երևանում հայտարարում է թարգմանչի/բանավոր թարգմանչի մեկ (1) հաստիքի թափուր աշխատատեղի մասին՝ լրիվ դրույքով, մասնավոր իրավունքի որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրով, 2 տարի տևողությամբ՝ Դեսպանությանը թարգմանչական և բանավոր թարգմանության ծառայություններ մատուցելու շրջանակներում, հետևյալ պայմաններով:

Հետաքրքրվող թեկնածուները պետք է ունենան հետևյալ որակավորումները՝

1. Լրացած լինի 25 տարին:
2. Անհրաժեշտ է լինել Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչ՝ ունենալով Հունաստանի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն: Այլ պետության քաղաքացիություն ունենալու դեպքում թեկնածությունը կարող է քննարկվել այն պայմանով, որ հաստատված լինի Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակության և աշխատանքային գործունեություն իրականացնելու իրավունքը:
3. Հայերենի և անգլերենի գերազանց իմացություն: Այլ լեզուների իմացությունը կդիտարկվի որպես առավելություն:
4. Նմանատիպ պաշտոնում ցանկացած մասնագիտական փորձ և նախորդ ծառայություն, որը ներառում է թարգմանչական/բանավոր թարգմանության լիարժեք հմտություն՝ հայերենից հունարեն և հակառակը:
5. Ունենա համալսարանական կրթության դիպլոմ կամ օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատության համարժեք ավարտական փաստաթուղթ:
6. Համակարգչային լիարժեք իմացություն և սոցիալական ցանցերի օգտագործման իմացություն:
7. Ցուցաբերել գաղտնապահության և պատասխանատվության բարձր զգացումն հաղորդակցվելու ունակություն, հատկապես՝ բանավոր թարգմանության իրականացման ընթացքում: Պետք է ցուցաբերեն պատրաստակամություն, աշխատասիրություն և համագործակցության ոգի:
8. Արական սեռի Հունաստանի Հանրապետության քաղաքացիները պետք է կատարած լինեն իրենց զինվորական պարտականությունները կամ օրենքով սահմանված կարգով ազատված լինեն դրանցից:

9. Ունենալ մաքուր քրեական արձանագրություն: Անհրաժեշտ է դատվածության և հետախուզության բացակայության մասին տեղեկանք:

Աշխատանքի ընդունվող անձը, եթե ունի Հունաստանի քաղաքացիություն, կարող է ենթարկվել Հունաստանի սոցիալական ապահովագրության օրենսդրությանը: Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սոցիալական ապահովության կարգավիճակը կարգավորվում է տեղական օրենսդրությամբ: Ամեն դեպքում, գործատուի վճարները կրում է Հունաստանի պետությունը:

Հետաքրքրված անձանց խնդրվում է ուղարկել դիմում, հետաքրքրության նամակ, անձնագրի կամ անձը հաստատող փաստաթղթի (ID-ի) պատճեն, մանրամասն ինքնակենսագրություն (CV), ինչպես նաև հանդիսավոր հայտարարություն, որով նրանք պարտավորվում են պահանջի դեպքում տրամադրել անհրաժեշտ փաստաթղթերի բնօրինակները: Դիմումում, թեկնածուի հասցեից բացի, պետք է նշվի էլեկտրոնային փոստի հասցե և կապի հեռախոսահամար:

Համապատասխան փաստաթղթերի ամբողջական փաթեթը, որը ներառում է վերը նշված պաշտոնը զբաղեցնելու համար որակավորումը/համապատասխանությունը հաստատող բոլոր տեղեկությունները, պետք է ուղարկվի մինչև **2026 թվականի սեպտեմբերի 30-ը, չորեքշաբթի, ժամը 17:00-ն**, հետևյալ կերպ՝ էլեկտրոնային փոստով (թեմայով՝ «Հայտարարություն թարգմանչի/բանավոր թարգմանչի պաշտոնը զբաղեցնելու համար») հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ **gremb.ere@mfa.g:** Թեկնածուները պետք է իրենց դիմումը ուղարկեն մեկ էլեկտրոնային նամակում:

Այն թեկնածուները, որոնք բավարարում են սահմանված պաշտոնական պահանջներին և ունեն համապատասխան որակավորում, կհրավիրվեն հարցազրույցի:

Երևան, 16 սեպտեմբերի 2026թ.

